ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-15/3 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2015թ-ի մարտի 30-ին կնքված ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-15/3 ծածկագրով պայմանագրում 2015թ-ի հոկտեմբերի 1-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Անհրաժեշտություն է առաջացել երկարաձգել ծառայությունների կատարման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ծառայությունների կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև՝ 2015 թվականի դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 25.09.2015թ. թիվ 1095-Ն որոշում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 011 800 117:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ֆինանսների նախարարություն**

Համաձայնագիր-2
30.03.15թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-15/3 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան « 01 » հոկտեմբերի **2015թ.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի մի կողմից, և Ճարտարապետական արվեստանոց «ԶԱԱՐՏ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության տնօրեն Ա.Զուրաբյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 30.03.15թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-15/3 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.09.2015թ. թիվ 1095-Ն որոշումը՝ Կողմերը որոշեցին երկարաձգել Պայմանագրով նախատեսված ծառայությունների կատարման ժամկետը, այն սահմանելով մինչև 2015 թվականի դեկտեմբերի 1-ը ներառյալ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ ֆինանսների նախարարություն	Ճարտարապետական արվեստանոց «ԶԱԱՐՏ» ՍՊԸ
ք. Երևան, Մ.Ադամյան-1	ք.Երևան, Մաշտոցի-16/42
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	«Յունիբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900013574018, 900013202016	Հ/Հ 24100102754900
ՀՎՀՀ 02629081	ՀՎՀՀ 02572984
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝	Ճարտարապետական արվեստանոց «ԶԱԱՐՏ» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ա.Արզումանյան	**Ա.Զուրաբյան**